«Ս. ԳՐԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԳԱԲՐԻԵԼ ՋԱՄԲԱՐՋԻԻՆ

Դեկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց տեր և տիկին Գաբրիել Ջամբարջիներին՝ բարձր գնահատելով ազգային կյանքում նրանց մատուցած ծառայությունները:

Շքանշանի հանձնման արարողությանը բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Այնուհետև տիարք Շահեն Կարամանուկյանը և Լևոն Սարգսյանն անդրադարձան մեծարյալների ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեությանը, նրանց առաքինի և բարերար ոգուն: Նրանք հանգամանորեն ներկայացրեցին Գաբրիել Ջամբարջիի ունեցած մեծ ներդրումը հայ-սիրիական կապերի հաստատման գործում, նրա հոգատար վերաբերմունքն ազգային կրթական և գիտական հաստատությունների նկատմամբ և որդիական զորակցությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաքելությանը՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ջամբարջի ամուսիններին բարձր գնահատանքի արժանացնելու համար:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը (տե՛ս էջ 11):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալների կուրծքը զարդարեց Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհակալական խոսքով դիմեց պրն Ջամբարջին՝ վստահեցնելով, որ պիտի շարունակի իր ծառայությունը ազգին և Եկեղեցուն:

Արարողությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: «*Ուրախ ենք, որ մեր ազգի զավակների մեջ արթուն է բարեգործության ոգին, որ նրանք, ուր էլ որ ապրելիս լինեն, իրենց հայացքն ուղղված է դեպի Մայր Հայրենիքը, նաև դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ նվիրական մեր սրբօրրանը, որ կրում են իրենց հոգուց ներս: ...Այս շքանշանը մի նոր առիթ պիտի լինի՝ ավելիով իրենց օգտաշատ ծառայությունը բերելու մեր Հայրենիքին, ազգային մեր կյանքին և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն»,* - ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ վերստին իր գնահատանքը հայտնելով նվիրյալ հայորդիներին:

Արարողությունը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ